ԵՍ ՍԻՐԵՑԻ ՔԵՋ, ՂԱՐԱԲԱՂ

Ես ղարաբաղցի չեմ։ Ու երբեք չեմ եղել Ղարաբաղում։ Ինձ նման բախտ չի վիճակվել։ Ղարաբաղը իմ պատկերացումներում, իմ հուշերում միշտ եղել է անկրկնելի, վիպական աշխարհ։ Հավանաբար, այդ սիրուց էր այն հուզմունքը, որ զգացի, երբ վերջերս իմ թղթակցությունը տը պագրվեց «Սովետական Ղարաբաղ» թերթում։ Լեռնային Ղարաբաղի անունը, որն այժմ հնչում է ամենատարբեր ամբիոններից, և իր վրա է սևեռել մեր երկրի լայն հասարակայնության ուշադրությունը, թանկ է ինձ համար ու նվիրական։

1940 թվական։ Էջմիածնում որպես գնդի հրամանատար էր ծառայում ապագա Սովետական Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը։ Անվանի զորավարից իմ տարիքի երեխաները շատ բաներ իմացան Ղարաբաղի մասին։ Սա իմ առաջին ծանոթությունն էր Ղարաբաղի հետ։

Անցան տարիներ։ Մեծ հայրենականի դաժան օրերին, Ուկրաինայի Պոլտավա քաղաքի ազատագրության ժամանակ ծանր վիրավորվում է ղարաբաղցի, հետագայում գուսան Բագրատը։ Արդեն գրնդի զինվորներին սիրելի այս երգիչը՝ Բագրատը, ստանալով առաջին բժշկական օգնությունը, խնդրում է բժշկուհուն.

Սիրո փոշին դու իմ սրտից
շաբես.
Խնդրում եմ ինձ առողջ
տղա դարձնես,
Ղարաբաղի լեռներին եմ
բնակիչ,
Հույսով եմ, որ մի դեղ
կտաս ինձ փրկիչ։

Մինչև այսօր էլ անգիր հիշում եմ այս տողերը։ Հայրենական պատերազմի ավարտից հետո աշխատել եմ Հայկական ՍՍՀ Էջմիածնի շրջանի Շահումյան գյուղում որպես ակումբի վարիչ։ Շուրջ 20 տարի կապ եմ ունեցել գուսան Բագրատի հետ։ Նա շատ հետաքրքիր պատմություններ էր պատմում հայրենի Ղարաբաղի մասին։ Ես կլանված լսում էի նրա կարոտագին խոսքերը։ Այնուհետև անցան տարիներ։ Ղարաբաղցի իմ ծանոթներ-բարեկամների ցուցակը ավելացավ. Մարտակերտից՝ Արմեն Սարգսյան, Հադրութից՝ Հասմիկ Հովհաննիսյան։ Ստեփանակերտից՝ Գուրգեն Հակոբյան, Իզաբելլա Ստեփանյան և շատ-շատերը։

Ես սիրեցի Ղարաբաղի քաղցրաբառ լեզուն։ Սիրեցի նրա աշխատավոր ու բարի մարդուն։ Սիրտս անափ մի ուրախությամբ է միշտ լցվում, երբ հայատհական առիթներ ինձ նոր ծանոթություններ են բերում։

Կիևի զինվորական օկրուգում որպես սերժանտ ծառայում է տղաս։ Ամեն անգամ, երբ այցելում եմ նրան, որդուս հետ միասին ինձ տեսության է գալիս սև մազերով, առնական տեսքով մի երիտասարդ, Ստեփանակերտ քաղաքի բնակիչ, երիտասարդ զինվոր Արարատ Գրիգորյանը։ Իր քաջ նախնիների սերնդից է նա՝ հպարտ, խելացի։ Խոսում էինք դեսից-դենից, այսօրվա Ղարաբաղի հոգսերից։ Երբ Ղարաբաղի անունն էր տալիս, ես արցունքներ եմ նկատում զինվորի աչքերի խորքում։

Ոչ, թուլության նշան չէր դա, այլ մտահոգության՝ իր երկրամասի վաղվա օրվա համար։

Ղարաբաղ աշխարհը նաև իմ սիրան ու հոգին է։ Նրա ցավն ու հոգսը, ուրախությունն ու վիշտը, հաջողությունն ու պարծանքը՝ նաև իմն են։ Ես փորձում եմ խոսքեր գտնել արտահայտվելու, բայց չեմ կարողանում։ Տուն եմ դառնում, ու հուշերս ու մտորումներս ինձ հանգիստ չեն տալիս։ Աչքերիս առջև են գալիս տարիների ընթացքում ինձ պատահած ղարաբաղցիների կերպարները՝ հեռավոր սիրո պես ցանկալի, անծանոթ Ղարաբաղս։

ԴԵՐԵՆԻԿ ԵՐԵՄՅԱՆ
ք. Կիև